


ՆԱԲԱՌԱԹԵՐԹ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 62 ՆՈՒ ԵՆՈՐԲ, ՇԱԲԱԹ, ՅՈՒՆՎԱՐ 14 1899 ԳԻՆ 3 ՍԷՆՅ



ՁԵՅԹՈՒՆԻ ՍԻՒՆԱԿԸ

Ընդհանուր Գանձապատին յանձնած ենք 6.00 տարար, որ զրկուած է մեզ հետեւեալ անձերէ, ու ժամանակին հրատարակուած է ՏԻԳՐԻՍԻ մէջ: § 1.00 Պ. Գարրինեանէ (Չըլտի), § 5.00 Տ. Յովսէփեանէ (Ուաշինկիթըն):

Քաղաքի Ձէյթուցի Յանձնախորհրդի յանձնած ենք եօթը տարար, որ ստացած էինք քանի մը անձերէ, և որոց ցանկը հրատարակուած է 60րդ թուի մէջ:

Ներգրական թղթերով 26 տարարի մասնաւոր փոխ մը ստացած ենք՝ ստանց նամակի և ստանց բացարձակ ենք:

Ուսիքը յանձնախորհուրդը ամսոյս 4ին § 80.50 դրկած է ընդհանուր Գանձապատին: Այս դրամը գոյացած է 42 տարար Հոկա. 2ի ժողովին մէջ, իսկ մնացեալը՝ «Յինթի» ներկայացուցին: Բայց ո՛ր է հրատարակուած 100 տարար...:

Ուսիքը յանձնախորհուրդը հրատարակուած իր շնորհակալութիւնն կը կը յայտնէ այն ազնիւ երիտասարդաց, որք պարտաստած էին Յինթի խաղն ու ներկայացուցած էին նոյն քաղաքի մէջ:

Պրայթընէ կը գրէ մեզ մի պատահական թղթակից. «ՏԻԳՐԻՍԻ 60րդ թուոյն մէջ Պրայթընէ մեզ զըրկուած տեղեկութեան քանի մը պարագաները ընդհանուր զժողովուն ստանջ բերած է: Ճշմարտութիւնը սա է թէ Յանձնախորհուրդի աշխատութեամբ 72 տարար արգէն հանգանակուած էր՝ երբ Սարաճեան Սրբազանի նախագահութեամբ ժողովը ունեցան: Սարաճեան Սրբազանի ներկայացուցեալ միջակ 13 տարար հանգանակել կարելի եղած է. այդ 13 տարարին 5 տարարը տեղին վարձք վճարուած է. ըսել է թէ նորին Գերապատուութեան ներկայութիւնը Ձէյթուցի համար միջակ 8 տարարի հասոյթ մը բերած է: Գալով ձեր նամակագրին այն տեղեկութեան թէ «Հանգանակութեան արդիւնքը, 80 տարար, Սարաճեան սրբազանի զրկած է ընդհ. Գանձապատին», բոլորովին սխալ է. Յանձնախորհուրդի զրկուածին ձեռքով իրկուած է Տիար Թավաճանեանին՝ այդ գումարը:

Մեր Փրովիտենի թղթակիցը կը գրէ մեզ թէ տեղւոյն Հոգաբարձութեան քով 250 տարարի չափ կայ ի նպատակ Ձէյթուցի հանգանակել: Այս գրամէն 100 տարար Տ. Վաղինակ վարդապետի ձեռամբ Ս. Պատրիարք հօր կը զրկուի ժամանակին՝ առանց

ժողովրդի զիտակցութեան: Այս գումար իր սեղ չի հասնիր՝ մընի օրտըրը կորսուած ըլլալուն համար: Վաղինակ վարդապետ այժմ կը ջանայ եղեր ուրիշ հրամանագիր մը ձեռք բերել փոխէն՝ առանց խնդրել ժողովրդի ականջը հասցնելու: «Հայր Վաղինակ, կ'ըսէ թղթակիցը, որ միտքիւն մը յառաջ բերելու ջերմ պաշտպանն էր, և նորանոր ծրագրերն էր կը յօրինէր այդ մասին, չեմ գիտեր սակայն թէ ինչո՞ւ այս գործին մէջ ընդհանուրին հետ չի միացաւ»: Ցաւալի է այս դէպքը. Վաղինակ վարդապետ ինքն ըլլալու էր բաժանեալ գործողներու գէ՛մ բողոքող առաջին մարդը և առաջին եկեղեցականը մեր մէջ:

Ըստեղինէ կը լսենք թէ տեղւոյն Հայոց մէջ կրօնական կուսերը ծագած են վերջերս, և կուսին հեղինակները այս միջոցաւ ջանացած են արգելք հանել Ձէյթուցի համար սկսուելիք հանգանակութեան դէմ: Պարտաւրդ կուտանք մեր Ըստեղինի հայրենակցաց կուսերու չի գոհել Ձէյթուցի խնդրը, որ վեր է անհասանելի ու կրօնական ամեն ներկատուներէ:

Ընդհ. Գանձապատին ստացած է ցարք.

Table with 2 columns: Name, Amount. Includes Արգէն ծանուցեալ \$570.72, Հրագրոյ խմբագրութենէն 6.00, Ուսիքի Յանձնախորհուրդէն 80.50, Լինի Յանձնախորհուրդէն 96.41, Սէլիմի Յանձնախորհուրդէն 81.25, Ըստեղինի Հայերէն 16.00.

Գումար \$850.88

Այս օրուան թղթատարով 200 անգղիական ոսկի կը զրկուի Լոնտոն՝ պետական վտանգելի անձի մը միջոցաւ Հալէպ փոխադրուելու համար:

Գանձապատի հասցէն է. MR. H. TAVSHANJIAN, 343 B'WAY, NEW YORK CITY

ՏԱՅԻՆ ՈՒ ՄԻՍՏԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

Պօլսոյ Ամերիկեան նախկին դեսպան Պատ. Յ. Պ. Անճէլ Յունվար 4ի երկուցին Պրոքըրին Սէնթրըլ ժողովական եկեղեցոյ մէջ քարոզ մը խօսեցաւ Հայկական ջարդերու և Միսիօնարական գործոց վրայ ի Տաճկաստան: Գարողի այս վերջի մասը մեզ հետաքրքրութիւն պատճառով բան մը չունի, զի նոյն Գրիտտոսի այգիին պատմութիւնն ու նոյն մշակներու գործոց նկարագիրն է:

Կոտորածներու վրայ խօսելով Մր. Անճէլ ըսաւ թէ՛ ջարդերը ոչ թէ կրօնական տարբերութենէ կամ մահմետական մոլեռանդութենէ առաջ եկած էր, այլ արգելք էր սա իրողութեան թէ Հայերը խնայող ու վաճառական ազգ մը ըլլալով՝ Թուրք հասարակութեան հարստութիւնն իւր

լած էին անոր ձեռքէն ու Տաճիկ տարրը տեսակ մը գերի բրած էին՝ նիւթական տեսակէտէ նայելով: «Սըրտովութիւններն Ձուրիցերի կրկուող 10-12 Հայ երիտասարդներէ սկսեցաւ: Ասոնք անիշխանական գաղափարներով առգորուած՝ Պօլսո եկան Հայաստանը ազատելու մտօք, և սկսեցան շէնքեր օդը հանել, դրամատունը գրաւել ևն: Սուլթանը սարսափեցաւ ու հրաման ըրաւ Հայերը ջարդեն»:

«Հայ ժողովուրդը կարծուած ինչափ մեղադրելի չէ. եթէ կառավարութիւնն այդ 10-12 անիշխանական անհասանելի անմիջապէս կախէր, փոխանակ ժողովուրդը ջարդելու՝ իսրտովութիւնն իր օրօրոցի մէջ մեռած կըլլար»:

Գարողը վերջացուցած ատեն նախկին Պատուելի-գեսպանը բաւական գովեստներ չուղարկէ վերջ «անբացատրելի» Թուրքին, ըսաւ նաև թէ անհասանելի է որ Թուրք կառավարութիւնն Միացեալ Նահանգաց պահանջուածներն վճարէ... խաղաղութեամբ:

Ուաշինկիթընէ հեռագիր մը երբորդ անգամ ըլլալով կ'աւետէ թէ Սուլթանը դեսպան Ըստրալի խոսաացած է վերջապէս Միացեալ Նահանգաց պահանջը վճարել: Չոր խոստումը երբ Սուլթանէ մը կուգայ՝ արժէք չունի: Այս խնդրի մէջ դրամի ձայնին միայն կարելի է վստահել: Սուլթանի խոստումը սառել վրայ գրուած գրի մը չափ ալ նշանակութիւն չունի աշխարհի առջև:

ԳՈՒԵԱՐԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ամերիկայի մէջ գտնուող ամեն Հայաստանեայց եկեղեցոյ գաւազ, քաղաքի մէջ Հայ եկեղեցոյ անդամ նկատուող կամ չի նկատուող Լուսաւորչական ամեն Հայ իրաւունք ունի հատարապէս՝ քուէ տալ, մէկ անգամ միայն:

Քուէ տուողներուն անունները չի պիտի հրատարակուին, հակառակ ոմանց կարծածին:

Քուէաթուղթը, որ տպագրուած պիտի գտնուի քանիցս լրագրիս Յրդ երեսին վրայ, լեցնելու է ամենայն զգուշութեամբ: Անոնք որք համակիր են Սրբազանին՝ «չեմ ուզեր» ին վրայ մեթանով գրի մը քաշելու են, իսկ անոնք որք անհամակիր են՝ «կուզեմ» ը ջնջելու են նոյն կերպով:

Քուէասուռք իրենց ամբողջ անունը, մականունը, տարիքը, ծննդավայրը և ամբողջ հասցէն գրելու են յստակ կերպով: Աւելորդ ծախք չընելու համար՝ քանի մը մարդիկ կրնան իրենց քուէները մէկ պահարանով զրկել: Իսկ քաղաքն ու անոր մօտերը բնակողք կրնան անձամբ իրենց քուէն տուիլ նետել: Քուէարկութենէ վերջ քուէաթուղթերը պիտի քննուին. կասկածելի երկցող քուէաթուղթերու մասին քննութիւն

պիտի բացուի, և եթէ գտնուի մէկը որ խարդախութիւն ըրած է, պիտի խայտառակուի հրապարակուած: Մեր գործակալներն աշխարհը պիտի հսկեն և պիտի օգնեն մեզ այս կարեւոր խնդրի մէջ:

Մասնաւոր կարգադրութեամբ փոխի ցրուելը նամակները իր ձեռքով պիտի նետէ աւելին մէջ, անանկ որ կարելի չի պիտի ըլլայ կասկածելու տեղի գտնել ո՛ր և է պարագայի տակ:

Քուէաթուղթ չունեցողներն կըրնան գիմել մեզ կամ մեր գործակալներուն որոց պիտի զրկենք տպագրեալ քուէաթուղթներ փոխաբողաց ձրի արուելու համար:

Քուէ տուողները թուական ու իրենց հասցէն մոռնալու չեն գրել:

Ամեն քուէասուռ՝ մոռնալով անձնաւորութիւնն ու անհատը՝ իր խղճի ձայնին միայն ահանջ դնելով՝ քուէ տալու է այս մասին: Հայութեան ու ընդհանուր գաղթականութեան շահն է որ պիտի խօսի քուէարկութեան մէջ: Անհատի և անձի խնդրի չի կայ հոս բնաւ:

Քուէներն պէտք է շրջապէս հետեւեալ հասցէով:

To the Dickris Committee, 159 E. 27th Street, New York City.

ՎՐԻՊԱԿ.— Մեր անցեալ թուի մէջ 27րդ փողոցի գերձակի ընկերութեան անունը վարժապետեան և Սարաճեան տուած էինք, փոխանակ վարժապետեան և Ուղղունեան ըսելու: Նոյն խանութը կը վերադարձնուի անկէ վերջ միայն Պ. Ուղղունեանին:

Միամիտ Հայր—Տօթթօր, զըրկուած սատարի կը ցաւի. բան մ'ունիմ. գլխին մէջ կարծես պայթուցիք նիւթեր կան:

Տօթթօրը—Տղաս, երբեմ կընեմ պատուոյ վրայ թէ զրկող մէջ բան մը չի կայ բնաւ:

ԱՂԱՏ ԼՍԱՐՍԱՆ

Էլքս Հօլ. Պրօտուէյի և 27րդ Փողոցի անկիւնը, Նիւ Եորք:

Այս կիրակի Երեկոյ, ժամը ճիշդ 8ին

Պիտի խօսի Տ. Մարտիրոս Ենոպեան. նիւթ «Ի՞նչ կրնայ մեզ ապատել»: Վիճարանութեան նիւթ—Ռամկավարական թէ չափաւոր Միացեալական կառավարութիւնն օգտակար է երկրի մը—Տ. Պ. Ս. Գարրիէլեան պիտի պաշտպանէ առաջինը. Տ. Յ. Սիրականեան՝ վերջինը:

Ըտ սովորականին պիտի երգուին ազգային երգեր:

Ն Ո Ր Տ Ա Ր Ի Ի Հ Ա Ն Դ Ե Ս

Սովորական սրահին մէջ, վաղը կէսօրէ վերջ ժամը ճիշդ 1ին:

Ուէսթ Հոպոլըրի Հոյերը, կազմողի առթիւ հանգէս մը պիտի տան, որուն մէջ բոլոր հիւրերուն քանի մը տեսակ պտուղներ պիտի տրուին ձրի: Չովայուցելը ըմպելիքներ և այլն պիտի ծախուին՝ ինքպատու Ձէյթուցի: ՄՈՒՏՔ 10 ՍԷՆՅ



ՇԱՐԱՔԱՌԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
 Կը հրատարակուի մէջն Շարքաթ օրեր,
 ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ՝
 Հ. ԷԿԻՆԵԱՆ - - - - - Խմբագիր
 ՔԱՍՏԱՆԿՈՐԳՆԳՐՈՒԹԻՒՆ
 ՄԻՍՏԵՍԱԿ ԼԱՆՉԱՆԳԱՑ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ
 ՔԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ
 ՏԼ. ՍԹ. Տարեկան 10 Փրսնք.
 Տարեկան 1 50
 Վեցամսեայ 75 Բաժանորդագրին կԱՆՍԻԿ
 Եռամսեայ 40 վճարելի է միշտ:
 Ծրար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝
 To the DICKRIS PUBLISHING CO., 145 East 23d St., New York City

Entered at the Post Office at New York as Second Class Mail Matter.
 ՆՈՒ ԵՈՐԳ, ՇԱՐԱՔ, ՅՈՒՆՎԱՐ 14 1899.

ՎԱՂԸ

(Գ. և Վերջ)

Սպանիո-Ամերիկեան պատերազմի բազմաթիւ վերջաւորութիւնը նոր յոյսերով լեցուց մեզ: Ընթել Սամի Իսաուար յաղթութիւնը քաղաքական աշխարհը փոխեց: Անդրդա կռիւնները նոր զօրութիւն մը գտաւ Արեւմտեան կիսագունտի վրայ: Երկու խորթացած քոյր ազգերն սփիւռնոսի երկու կողմերէն ձեռք ձեռքի առին, ու Անկո Սաքսոն ցեղին այս նոր զօրութիւնը, հաւատք ունենք թէ օր մը Հայկական խնդրի շփոթ կնճիւղը լուծելու մէջ կոչուած ունի՝ մեզ ի նպատակ մեծ դեր մը խաղալ: Թէ Անկոյի և թէ Միացեալ Նահանգաց մէջ պոնդիտող Հայերուն վրայ այս առթիւ մեծ պարտականութիւն մը կը ծանրանայ անշուշտ: այս Հայ պոնդիտանին ու գաղթականներն ջանալու են հոտարակաց կարծիքն ու համակրանքը շահել միշտ թէ՛ անհատական և թէ՛ ընդհանրական գործերու մէջ: Հայկական ջարդերու յիշատակն ու հայկական իրենդիրն ընդհանրապէս՝ ժողովրդի մտքին մէջ միշտ կ'ապրի պահելու օր մը կրնայ օգտակար արդիւնքներ ծնիլ: Մենք թէ՛ մէկ կողմանէ մեր աշխատութեան ու ներքին սթիլի կը վստահինք, բայց միւս կողմէ՛ Եւրոպական ազգի մը օգնութեան ու համակրանաց կը կարօտինք միշտ: Եւրոպացիք յանուն մարդկութեան ու արդարութեան գործ չեն ընէր հիմայ. ճշմարիտ է. բայց երբեմն հասարակաց կարծիքին տակ կ'ստիպուին անդի տալ, մանաւանդ Անգլիոյ և Միացեալ Նահանգաց մէջ, ուր ժողովրդի ձայնը ուրիշ ամեն երկիրներէ աւելի ազդեցութիւն կը գործէ կատարականութեան վրայ: Կատարականութիւն կոչուած մարմինը երկրի մը կամ ազգի մը միտքն է, իսկ ժողովուրդը անոր սիրտն է որ կը զգայ ու կը զգածուի շատ անգամ:

Վերջի պատերազմէն սողին այս Անկո Սաքսոն երկու ազգաց իրարու մերձեցումը արդարեւ դեռ գործնական օգուտ մը յառաջ չի բերու մեզ համար, բայց յուսախարաւ եղած չենք սակաւին, թէ՛ յուսախարաւ ըլլան ալ մեզ համար սովորական բան մը դարձած է: Բայց մտանալու չենք սակայն թէ հաշտութեան պայմանագրին դեռ վերջերս կնքուեցաւ ի Փարիզ, և սակաւին Գոնկրէսը իր վերջին խօսքը ըսած չէ այդ մասին:

* * *

Պատերազմը իր կարճ անողութեամբ մեծ չարիք մը չի գործեց մեր գաղթականութեանց համար: Հայ գործաւորութիւնն մի քիչ վնասեց նիւթապէս, բայց կը թուի թէ այդ կորուստ, գործերու ներկայ ընդհանուր շարժման մէջ, պիտի կրնայ դարձանուիլ:

Մեր կամաւորներն նշանակութեան արժանի կէտ մը եղան: Յիսուհէ աւելի Հայեր ծառայեցին քաղաքար Ընթել Սամի դրօշակին տակ: Գանիներ կուռի գաշտին վրայ, վառօղի մ'ուրին տակ, գնատակներու հեղեղին առջև կուռեցան որպէս կարիճ զինուոր. բայց ուրախ ենք ըսել թէ կեանքի կորուստ չունեցանք բնաւ: Թէ ջուրի և թէ ցամաքի վրայ Հայ գաղթականութիւնն՝ բազմաառարար՝ իր պարտականութիւնն լի ու լի կատարած եղաւ դէպի իր սրբեզբած երկիրը: Եւ ամենէ միտքարական կէտն սա է թէ Հայ տարրը, այս երկրի մէջ ալ ցոյց տուաւ փորձով այն զինուորական քաջարի սքին, որ Ռուսիոյ համար Լազարէֆներ, Մեկիքոֆներ, Մատաթեաններ, Տէր Դուկասովներ և ուրիշ շատ մը քաջամարտիկ ու անձուէր պաշտօնեաներ ու զօրքեր տուաւ: Բայց ապերախ Մոսքովը, որ քանի պարագաներու տակ իր փրկութիւնն Հայոց պարտած է, այսօր՝ այս բոլորի փոխարէն՝ մեր լուսոյ վառարաններն անգամ կը մթնցնէ՝ բոլոր ազգը միանգամէն կուռ տալու համար: Կը մայրենք սակայն որ Ամերիկա,

ազատութեան այս սիրահար ժողովուրդը, մեր մտաւեցած այս փոքր ծառայութեան փոխարէն՝ Չարէն շատ տարրեր կերպով կը վարձատրէ Հայը, որ թերեւ օր մը այս երկրին համար ալ Լազարէֆներու ծնունդ տայ:

Հայը ոչ միայն ջուրի ու ցամաքի վրայ ծառայեցին իրենց սրբեզբած երկրին, այլ մի քանի բժիշկներ ու գեղագործներ ալ տուին բանակին: Ասոնք թէ՛ պատերազմի դաշտին վրայ, թէ՛ բանակացեղաներուն և թէ նաւատորմի ժամ մէջ դարձանեցին հիւանդն ու վիրաւորը: Եւ այս սողեր գրուած ատեն երեք Հայեր, բժիշկ և գեղագործ, Ընթել Սամի կը ծառայեն տակաւին՝ ի Գիւպա և ուրիշ տեղեր:

Այս պատերազմին զինուորներ առինք, ուրիշ անգամ թերեւ զօրապետներ ալ տանք. այսօր նաւազ եղաւ Հայը, թերեւ օր մը ծովակալ մը ըլլայ: Այս տարի Ընթել Սամի դրօշին տակ կուռեցանք սպանիական բարարատութեան դէմ՝ բաղդակից ժողովուրդ մը ազատելու համար, գուցէ օր մ'ալ մեր ազգին ծառայենք իրր զինուոր քաջամարտիկ կամ ճարտար ծովակալ: Ժամանակը հրաշքներ կը գործէ. և պատրաստ ըլլանք...

—)(—)

ԱՐԹՆՑԷ՛Ք, Պ. ԱՌԻՒՄՆԵՐ

Սարաճեան Սրբազանի բարեկամներէ քանինք զիտողութիւն կ'ընեն մեր սկսած քուէարկութեան համար, և կը կարծեն թէ ժողովրդի ձայնն ու քուէն, լինի ի նպատակ կամ հակառակ, կ'ախտիկուի «փապուճին» անգամ չի պիտի կրնան հասնիլ, և կը խրատեն մեզ որ՝ յանուն խաղաղութեան՝ քուէարկութիւնը դադարեցնենք, որպէսզի «քնացած առիւծներն» արթնցնելու առիթ ու պատճառ չ'տանք:

Մենք կը հաւանք նստի թէ Հայրիկ իր գաւակաց ձայնը չի պիտի արհամարհէ այնչափ՝ որչափ կը կարծեն ուրիշներ. և թէ Ամերիկայի ընդհանուր Հայ գաղթականութեան ձայնը ոչ թէ անոր փապուճներուն չի պիտի հասնի, այլ անոր հայրենական սրտին պիտի խօսի ու ժգրի: «Չի լացող մանուկին կաթ չեն տար»: Ասկէ դաս, ՏԻԳՐԻՍ, Սրբիմեան Հայրիկը կոյրօրէն պաշտող մը չ'ըլլալով հանդերձ, չի կրնար այնչափ աննպատակ գաղափար մ'ունենալ նորին վեհափառութեան վրայ, որչափ ունին Սարաճեան Սրբազանի սակարկութիւն համակիրները:

Մեր կարծեօք աններելի սխալ է կարծել նաև թէ այս քուէարկութիւնն իտուութեանց պատճառ պիտի ըլլայ: Հայ գաղթականութեան պատուոյն դէմ անխրատ ամբաստանութիւն մը կը համարենք դայս: Մեր անկեղծ համոզումն եղած է և է թէ այս քայլ ոչ թէ իտուութիւնն յառաջ պիտի բերէ, այլ իտուութիւնն պիտի կրնայ բառնալ մէջ անկէն, ուստի քուէարկութիւնն, դեռ չ'սկսած, դադարեցնելն անհարկելի է, եթէ մեր կամքն անկախ պատճառներ չի պարտաւորին զմեզ անդի տալ զօրութեան մը առջև: Եւ ոչ սպաքէն ամեն իսոյք հասկցողներու ժողովի մէջ անգամ ամեն կարևոր ու իտուութիւն քուէով կը լուծուի: Եւ ինչո՞ւ խորշիլ այս քուէարկութենէ, քանի որ Եպիսկոսոսի բարեկամք իրաւունք ունին կարծել թէ ժողովրդի մեծամասնութիւնն ի նպատակ է Սարաճեան Սրբազանին: Չէ՛ բարեկամներ, այս քուէարկութիւնն իտուութիւնն յառաջ չի պիտի բերէ, եթէ այդ նպատակաւ աշխատողներ ալ ըլլան. և մեր կարծիքն է թէ ամեն բան խաղաղութեամբ պիտի անցնի, և փորձով պիտի տեսնենք թէ Ամերիկայի Հայն ալ սորոված է քուէարկութենէ վերջ ընդհանուր ձայնին հետադարձիլ ու յարգել զայն:

«Քնացած առիւծները» արթնցնելու երկրորդ մեզ ոչ միայն վատ չի պատճառներ, այլ և ազդեցութիւն անգամ չ'ընեն մեր վրայ: Եթէ մեր մէջ քնացած առիւծներ կան, ինչո՞ւ պէտք է որ քնացած մնան. ոչ սպաքէն զործող աղուէսը քնացող առիւծէն շատ աւելի օգտակար է: Թո՛ղ արթնան այս առիւծներն ու հրապարակ կ'ընեն, և մեր չի զիտցածը հաճին սորվեցնել ժողովրդին:

Եթէ այս ժողովրդական ընդհանուր շարժումով, առանց ուրիշ օգուտ մը յառաջ բերելու, լոկ կարենանք արթնցնել այն ծոյրերն, որք կը քնանան եղեր մեր մէջ, մեր աշխատութիւնն վարձատրուած պիտի սկսենք դարձեալ, վասն զի մեծ պէտք ունինք մենք մեր բոլոր առիւծներուն: Արթնցէ՛ք, Պ. Առիւծներ, գործ կայ ձեզի համար...

ԱՂԴԵՐ

Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ պաշտամունքը կանոնաւոր կերպով կատարելու համար դպրաց դաս մը կազմած լինելով՝ ձայնաւոր երկասարգներու պէտք ունինք: Ուստի Ս. Եկեղեցւոյ երգեցողութեանց քիչ շատ վարժութիւն ունեցող մեր եղբայրներէ կը խնդրենք յատկապէս որ հաճին դալ միանալ մեզի, որպէս զի կարենանք միասուն և կանոնաւոր դպրաց դաս մը ունենալ:

Փափաքողներն կրնան դիմել Տ. Գրքաւարանին. 30 իսթ 28րդ փողոց:

Ի Գիւմայ Դպրաց Դասու Դպրակետ ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆԵԱՆ:

ՔԱՐՈՉ ԵՒ ԴԱՍ—Վաղը, Կիրակի առաւօտ ժամը 10.30ին էլքս ձօլի մէջ, 27րդ փողոց եւ Պրօստաէյ:

ԳԻՇԵՐ

Գիշեր, մարդիկ կը ննջեն, Լուսնն չէն և անապատ. Թէ՛ և արևուր և սև ևս, Այլ չեմ քեզմէ ինչ անջատ:

Ես ալ ունիմ մը թուրիւն, Ոգուոյ վերայ թանձրագին. Ուր ոչ նըշյալ մի յուսոյ, Լայս չի գործեր ստանձին:

Միշտ խաւար է իմ կեանքը, Աստղեր չիկան լուսատու. Չունիմ լուսին արծաթի, Ինչպէս երբեմն ամպովը՝ դու:

Չով տուր ճակատս, աչերուս, Ուստ՝ կայք և բոց դուրս կուգան Ցօղէ քաղցրիկ քո շաղէն, Ի խոնջ մտքիս անդաստան:

* * *

Թող որ պատմեմ իմ վերայ, Թէ ինչ արկած կըրեցի. Մասաղ օրէն սև բաղդը, Ձիս տապալեց աքացի:

Ես պանդուխտ եմ, տարադիր, Կարօտով լի կ'արաստուեմ. Իմ սուրբ հողին Հայրենեաց, Ողբերգարկու սոխակ մ'եմ:

Օտար երկրի ծոցին մէջ, Անընդունակ եմ, անտուն. Այլոյ ծիծաղ, ինձ թախիծ, Այս է բաժինն իմ համբուն:

Ս. Հ. Բ.

ԱՆԻՐԱՒ ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐ

Իսանի մը շարքաներէ ի վեր է որ նիւ Երզնէ Բողոքական եկեղեցին ազգային հանդէս հանդիսի ետև կուսայ: Օր մը «Հայաստանի նահատակներուն հոգեհանգիստը» կը յայտարարուի. ժողովուրդը իր ազգային դագամանց դաշող այս հրաւերին վերայ ժողովքի կ'երթալ և ինչ կը տեսնէ — Հոգեհանգիստը երէցին ամուսկանին համար հանգանակութիւն մ'է եղեր:

Ուրիշ օր մը «Դեցազնուհի կիւլիզարին Թեքը» կը ծանուցուի կրկին երէցին թողալ վճարելու նպատակաւ: Այսպէս ժողովրդի ազգային դագամանց թեքըուն վրայ հայրենասիրական նուազներ անխու շահագործումներ տեղի կուենան:

Իսկ այդ եկեղեցին ինք իր կողմէն ինչ պարտականութիւն կ'ըլլա՞ցայ դէպի այդ նահատակները, դէպի անոնց սրբերը, դիւցազունները և անոնց աւերակ երկիրը: — Ոչինչ:

Այն կիւլիզարը, սրոյ անունը շահագործեցին՝ եթէ կարօտի մէջ ըլլար ու ի նպատակ անոր հանգանակութիւն մը բացուէր, ես տարակոյս չունիմ որ այս օրուան այդ «Դեցազնուհի» անունին շահագործողները թեքըուն շարանին ծոցով ու հեզելով մէկ կողմ պիտի անցնէին՝ ինչպէս որ ըրին երբ Ձէյթունը սովի ճանկերէն ազատելու համար հանդէսը տեղի ունեցաւ: Մեր վերի պարտներն ու իրենց երէցը ոչ միայն այդ հանդէսէն բացակայ գտնուեցան, ոչ միայն դէթ մէկ մէկ 25 սէնթեց տուտակ գնել զլացան, այլ անոնցմէ ոմանք ամեն անխիղճ միջոց գործածեցին՝ հանդէսը անյաջողութեան մասնելու, և բաւական վնաս հասցունելու միտքարկութիւնն ալ ունեցան:

Վստահ եմ որ կան ազգային շահերուն նուիրուած Բողոքական ազգայիններ, որոնք ինձի հետ ձայնակո

ցելով՝ այսպիսինքն պիտի կոչեն «Անիրաւ շահագործողներ»:

Կամ ազգային պարտականութիւնն իսկ կատարելու ենք, և կամ ազգին ցաւերը շահագործելէ խալառ հրաժարելու ենք:

ԲՈՂՈՒՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԸ

Այս յօդուած կը հրատարակենք այսօր յուսալով որ մեր Բողոքական եղբարք պիտի կարենան զայն հերքել բանաւոր փաստերով: Ծ. Խմբ.

ԹՂՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԷ՛ ԳՍՂՈՒՍՄ ԵՒ Մ Ա Ն Ր Ա Լ Ո Ւ Ր Ք

Հետեւեալը զրկուած է մեզ ի հրատարակութիւն.

«Քաղաքիս Սեբաստիոյ Որբանոցի Օժանդակ Ընկերութիւնը, Մենդեան Տօնի առթիւ, պատասպարեալ որբերու ինպատար տար օսմանեան սակի զրկած է Սեբաստիոյ որբանոցին: Օժանդակ Ընկերութեանս գործադիր անդամները իրենց շնորհակալութիւնը կը յայտնեն հրատարակու իրենց Ընկերութեան բոլոր նուիրատուներուն, և կը խնդրեն քաջայերուցիւն ժողովրդէն, և անոր ձայնը եղող ՏԻԳՐԻՍՏԷՆ, որպէս զի այս նոր տարիին աւելի ետանդով աշխատին և աւելի արդիւնաւոր օգնութիւն մատուցանեն Հայրենիքի թշուառ որբերու սնուցման և դաստիարակութեան համար:

Ի Դիմաց Գործադիր Ժողովոյ Նիւ Եօրք, Յունվար 2. (Կնիք)

—Հետեւեալը Պօսթոնէն պատահական թղթակից մը գրած է մեզ, և մեր այդ կողմերն ունեցած թղթակիցներէ մին վկայած է այդ մասին:

«Բնիկ Խարբերդցի և Ս. Յակոբ թաղի ազգայիններէն Պէշկէթուրեան կամ Մուրադեան Խորայէլ անուն անձը, որ իր նշանաւոր արարքներով շատերուն ծանօթ է, անցեալներն Բէշմալլիքէն քաղաքս փոխադրուող Մինաս Գուսնեան անուն՝ ընտանիքի տէր և երկուստեան իմր անգործ կայր համող է թէ իսթ-Բէշմալլիքի այսինչ գործարանին մէջ 2—3 օրէն կարող է իրեն գործ մը գտնել. ասոր համար կը կորզէ ինդէն 50 տուրք, 10 տուրք իրեն, իսկ 40ը՝ պօսին կանխիկ վճարելու համար: Մինաս շարաշար կը խարուի, և փոխանակ թշուառութեան մատուցուած վիճակէն ազատուելու, 50 տուրքն ալ կը կորսնցունէ: Խնդիրը դատարանի ձգուած է այժմ, և իր կարգին կ'ապասէ դատուելու համար:

—Քաղաքիս Հայ Բողոքականաց նուագահանգէսը սեղի ունեցաւ անցեալ Ետեմիս Երեկոյ ի ներկայութեան 400ի շափ Հայ և օտարազգի Հանդիսականաց, ինպատար քաղաքիս Հայ-Աւետ. Եկեղեցւոյ: Հանդիսին մէջ մաս առին Օր. Մելքոն, Տիկին Տօնճեան, Կ. Պաղոյեան և քանի մը ամերիկացի արհիւններ: Ներկայացուե-

ցաւ Կիւլիզարի խողը երեք վարագործ, և չորս լեզուներով խառն, (Հայերէն, աստուերէն, անգլիերէն և ֆրանսերէն): Խողը ինքնին յաջողութիւն մը չեղաւ, ու արտար ապաւորութիւն ձգեց Հանդիսականաց վարայ: Ետեմիս արտնջացին թէ նամագով ու քիւրտերու կարգ մը անշընորհք խօսակցութիւններով, որք կըրնային մեր ազգային նկարագիրը արատարել օտարներու առջև, անտեղի էր շատ՝ դրամ հաւաքել եկեղեցիին ի նպատակ: Երեկոյթին մէջ ամենէ աւելի ընդունելութեան արժանի մասը կատարեց Տ. Շմաւոնեան, որոյ զուարճախօսութիւնն երկար ատեն կենդանի ու թարմ կը մնայ ժողովրդի մէջ: Հանդէսը փակուեցաւ Պատ. Խաղոյեանի մի քաջալերական ուղերձով:

—Պատուելի Խաղոյեան կրօն է թէ Ամերիկայի մէջ 8436 Հայ կան, 12 Բողոքական երէցներ՝ որք ամերիկացւոց կը քարոզեն, 3 Վարդապետ, 2 քահանայ և մէկ Եպիսկոպոս: Այս հաշիւ սխալ կը թուի մեզ. Պատուելի Խաղոյեան եթէ ցարդ չի գիտեր կամ չէ կրցած ստուգել թէ Ամերիկայի մէջ ոչ թէ երեք, այլ չորս վարդապետներ կան, ինչպէ՛ս կրցած է գիտնալ թէ գաղթականութեան թիւն է 8436. այս թիւը կըրկնապատկել Հարկ է՝ գաղթականութեան ուղիղ թւոյն մօտենալու համար:

—Անցեալ օր իր մահկանացուն կնքեց Յովհաննէս Չանգալեան ի Հասակի 70 ամաց: Թաղու մի կատարեց Տ. Վահրամ քահանայ, և Աւետիս Լուսինյանը:

—Նորընտիր Հոգաբարձութեան առաջին նիստը տեղի ունեցաւ անցեալ Երեքշաբթի երեկոյ՝ Տ. Թաւաշանեանի տունը: Դիւանը կազմուեցաւ Հետեւեալ կերպիւ. Տ. Թաւաշանեան՝ Առնեպետ, Տ. Գամպէր՝ Աստիճակալի, և Տ. Բէշկէհեան՝ Գանձապետ: Ժողովը ի մէջ այլոց որոշեց զՏ. Վահրամ քահանայն հրաւիրել որ Ս. Պատարագ մատուցանէ յառաջիկայ Կիրակի օր:

—Լօվէլէն կը լսենք թէ անցեալ Կիրակի Տ. Մալթոց վարդապետ ժողով կազմած է նոյն քաղաքի մէջ, ու Տ. 19.50 Հանգանակած է Եպիսկոպոսի ճանապարհի ծախսոց համար: Այս Հանգանակութեան մասնակցողներու անուններն Կաթողիկոսին պիտի զրկուի եղբր:

—Կը լսենք թէ անցեալները մէկը, պաշտօնէի մը դէմ ամբաստանութիւններ ընող անտորադիր նամակ մը զրկած է Ֆիլիպքի պատմոյի գործարանի մէկ տեսչին: Կարծելով կամ կասկածելով թէ այս նամակ Հայ է մը գրուած էր, գործարանատիրոջ հրամանաւ՝ Հայ մը գործէ կը ձգուի: Այս դէպք սեղուոյն հայոց մէջ տեսակ մը անհասկացողութեանց պատճառ կը դառնայ, անակ որ շատ մը նամակներ զրկուած են մեզ այս առթիւ հրատարակելու համար, բայց

որովհետեւ ասոնք ամենն ալ զիրար կը հակասեն, այսչափով բուն եղելութիւնը միայն պատմելով կը բաւականանանք:

—Բալուէն գրուած նամակներ կը տեղեկացնեն թէ չորս որբանոցներ կան այժմ նոյն քաղաքի մէջ, որոց մէկը Ամերիկացւոց, իսկ մնացեալք Գերմանացիի մը հսկողութեան տակն են:

—Քաղաքիս Երիտասարդաց Որբանոց Ընկերութիւնը ժողով ունի վարը Ոսկերբան եկեղեցւոյ մէջ:

—Տիկնաց Որբանոց Ընկերութիւնը որոշած է Ետեմիսի մէջ մեծ վաճառահանդէս մը ընել:

—Ամուսնութեան մը առթիւ Ապտակ Հետեւեալ կը գրէ մեզ Պօսթոնէն Դեկ. 31 թուականաւ.

«Գրիտմըրի առթիւ ամուսնութիւն մը տեղի ունեցաւ ի Բէշմալլիք Պրն. Յարութիւնեանի և որբեայրի Տիկն Ս. Կարապետեանի միջև:

«Ամուսնութեան քանի մը օր առաջ, փեսացուն կը գրիմէ Բէշմալլիք գտնուող Մուշեցի քահանային և կուզէ գիտնալ թէ Տէր Հայրը պիտի հաճի՞ ամուսնութեան արարողութիւնը կատարել: Տէր Հայրը «ամենայն սիրով, որբիս» ըսելով փեսացուն կը խրկէ, և ինքն ալ անմիջական կերպով Եպիսկոպոս-Առաջնորդին կը գրիմէ նամակաւ մը՝ և Հայրենիքի սովորութեան նման՝ հրամանագիր մը կուզէ:

«Սարահեան եպիսկոպոսը կը բարեհաճի հրամանագրի փոխան՝ յանդիմանագիր մը զրկել Գահանային, ըսելով թէ՝ ինք միայն միկրտութիւն և պատարագ կրնայ ընել, իսկ պարականութիւնը իրեն (Եպիսկոպոսին) կը պատկանի:

«Այս անց ու դարձէն անտեղեակ փեսացուն Ետեմիս երեկոյն Տէր Հօր կ'երթայ և կը հրամայէ որ իրեն հիւր ըլլայ մինչև Երեկոյն Երեքշաբթի, երբ Տէր Հօր միացուցը պիտի ըսէ: Տէր Հայրը կը ինքն ինք կը պատմէ: Փեսացուն կէս սրտմտած կէս բարկացած՝ տուն կը վերադառնայ. իր բարեկամները եղածը իմանալով՝ կը գրիմեն Գահանային, բայց իրար. Տէր Հայր կարգաւոր ըլլալէ վախճալով չը համարձակիր պատկել: Տէր Հօրմէ յոյս կարած՝ Հարսնուորներ Պատ. Բէշմալլեանի կը գրիմեն, որ կուզայ եւ կը պատկէ: Ամուսնացելը երջանկութիւն է, իսկ Սրբազանին իրատ մը:

«Քահանայի դէպքը ձեռքէն խել ուղեղուն պատճառաւ՝ ճաշը երրորդ մը վայելցցաւ»

ՏՆՄԱՐՆԵՐ

Ուսթըր, 2 Յունվար. Ուսթըրէն Հայ մը վերջերս Արմէնիայի սիւնը մտնող սկսած է՝ քամին խօսքերով, Հարկ չկայ ՏԻԳՐԻՍԻ սուղ էջերը գրաւել այդ Գերութեանց շարժառիթն ու նպատակը երևան հանելու համար, այլ Հարկ կը սեպեմ և կը բարականանամ մի քանի կէտերուն միայն պատասխանել, որով յօդուածագրին գոյնն ալ ինքնին երևան կ'ենէ: Սա անձ նախ կարգ մը իմաստակութիւններ ըրած է Մաշթոց վարդապետի ամիլուելու մասին. յուզուած մտքերն հանդարտեցնելու համար ըսելու եմ թէ երիտասարդ վարդապետը գեղեցիկ և կամ տարօրինակ երևալու համար չէ որ կ'ածիլուի, այլ նոյն իսկ Սարահեան Սրբազանի արտօնութեամբ ըստիպուած է այս ընել՝ յատուկ պատճառաւ, զոր յօդուածագիրն քաջ գիտէ:

Արմէնիայի յօդուածագիրը ՏԻԳՐԻՍԻ 51րդ թուին մէջ Սարահեան Սրբազանի քարոզի մասին գրուածները խեղաթիւրուած կը նկատէ, ու ճշմարտութիւնն ըսելու առաքինու-


թեան քօղին տակ, կաշխատի ՏԻԳՐԻՍԻ ու անոր Ուսթըրի թղթակիցը թշնամանել: Ուրախ եմ որ Սարահեան սրբազան իր քարոզն ահազին բազմութեան մը առջև խօսեցաւ, և այդ շարժիս թղթակցէն զատ ուրիշ ամեն ունկնդիր հասկցաւ այնպէս՝ որպէս տեղեկագրած եմ ժամանակին. և աւելի զարմանալին սա է թէ Հոգաբարձութիւնն ու Սարահեան Սր. ո' և է դժգոհութիւն յայտնած չեն իմ գրածներուն մասին: Թղթակից Պարոնը կարծես իր տակութիւնն աւելի երևան բերելու համար՝ հին խնդիր մ'ալ կը քրքրէ, կը կարծէ թէ ՏԻԳՐԻՍԻ 28րդ թուին մէջ Հայուհեաց Օժանդակ միութեան որոշումը սխալ կերպով հրատարակել տուած եմ, և կամ սխալալ վարայ պնդած եմ եղեր: Այո՞, պնդած եմ, բայց ոչ թէ սխալի՞ այլ ճշմարտութեան վրայ: Այդ որոշումը, հարկ է որ ըսեմ վերջապէս, ինձ հարկը ուսած էր պաշտօնապէս ընկերութեան այն ատենուան Ատենապետ՝ Տիկին Բարակեանի կողմէ որ կը պնդէր թէ այդ որոշում իրենց արձանագրութեան մէջ անգամ արձանագրուած է եղեր:

Սուք հասկցողին շատ բարև: Կը Հասկնա՞ք, Պ. Թղթակից: Հ. Թ.

Ա Բ Ր Ա. Հ Ա Մ Ս Ա. Հ Ա Տ Ի

Սրտածիչ և ներածիչ Արևելեան մեն տեսակ ըմպելիաց եւ զանազան նպարեղիւնաց, 92 Ուաշինգթոն և 23 Բէքթըր փողոց Նիւ Եօրք:

Սմեյլ վաստակար է թէ և, բայց զուտն ու մաքուր գործածելը օգտակար է:



Խմէ, գինի, օղի բայց թիչ, եւ մաքուրը, զուտը կամ հիչ: Իմ Թուրքիայէ և Սուրիայէ բերել տուած զուտ օղին ու մասթիքան չի կրնար գերազանցուիլ, զի մեր յատուկ գործարանի մէջ պատրաստուած է՝ եղբորս անմիջական հսկողութեան տակ: Իմ հին ու նոր գինիներն կրնան գոհ ընել ամեն յաճախորդ:

Նպարեղէններու մէջ առաջնակարգ տեղ մը կը բռնէ իմ վաճառատուն: Իմ ներածել տուած ապրանքներս ստէպ կը հասնին Արևելքէն եւ կը վաճառուին շուտով: Անիմ ամեն տեսակ արևելեան նպարեղէններ շաքարեղէններ, գէլիքուն, ձիթալի, նէրկիլէ իր բոլոր յարակից պարագաները, թրքական ծխախոտ, սիկըրէթ ևն. ևն.: Ոչ միայն մեր ապրանքներն ընտիր են, այլ գներն համեմատաբար գերաբարձալ են ամեն դատակարգի անձնաց համար:

Մեր դրից ու անկեղծութեան վրայ գաղափար առնել ուղղ չոր յաճախորդներուն՝ կրնանք ծանօթ հայերէ գրաւոր վկայութիւններ զըրկել:

Յանձնարարութիւնը դուրսի քաղաքներէ ձգելու կը կատարուին: Ամեն հրամանի Հետ գնոյն գէթ մէկ տասներորդ մասը զրկուելու է կանխիկ, իսկ մնացեալը Սի. Օ. Տի:

ԾՍԱՌԻ ԳՐՔԵՐ

Լրագրոյս Խմբագրութիւնն վերնատիկի Միջնորդաց Ծպարանին Հետ մասնաւոր կարգադրութիւն մը ըրած է՝ նոյն ապարանէն իր ընծայուած գրքերէն Ամերիկայի Հայոց վաճառուելու համար, Ո' և է գիրք ստանալ փոփաքողները կրնան գրիմել մեզ անձամբ կամ նամակաւ:

Ք Ո Ւ Է Ա Թ Ո Ւ Ղ Թ

1899

Պտորագրեալս՝ նախանձախնդիր դաւակ Հայ. Սուրբ Եկեղեցւոյ, ԿՈՒՉԵՄ 2ԵՄ ՈՒՉԵՐ | որ Գերապատու Յովսէփ Եպիսկոպոս Սարահեան Ամե- ըիկայի Հայոց Ընդհանուր Առաջնորդ մնայ:

Table with 2 columns: Name and amount. Includes entries like 'Անուն', 'Մականուն', 'Տարիք', 'Մենագալայր', 'Հասցէ'.

Ն Ո Ր Ա Վ Է Պ Ա Չ Գ Ա Յ Ի Ն

ԿԱՐԵՒՈՐ ՆԱՄԱԿԸ

Բ.

Օգոստոսի տաք օր մը երբ Նազար իր սենեկին մէջ առանձնացած կը գրէր, հեռագիր մը ստացաւ իր հօրմէ, որ զինքն անմիջապէս Պաքու կը կանչէր. Նազարի մայրը հիւանդ էր ծանրապէս:

Յաւ ցաւի վրայ: Նազար պիտի մեկնէր, թէև Ոսկիի կապերով կապուած ու կաշկանդուած էր իր սենեկին մէջ:

Երկայն ատեն մտածեց... և որոշեց վերջապէս առաջին շոգենաով ճամբայ ելնել:

Հետեւեալ օր գնաց իր ճամբու ստոմբին. երկու օրէն պիտի մեկնէր Անգղիայէն՝ բայց վերադառնալու հաստատ որոշմամբ:

Երկու օր նորէն. Նազար վանդակի մէջ բանտարկեալ վագրի մը պէս կ'երթեկէր սենեկին մէջ: Ժամերով այսպէս շարունակելէ յետոյ, միաքը նոր բան մը եկած մարդու մը նման յանկուզ գրասեղանին առջև նստեցաւ ու հետեւեալը գրեց.

Մանչեսթըր, Օգոստոս 25 95. Համեստուհի Օրիորդ Ոսկի Անտէրեան Սիրելի Օրիորդ

Թող ատէք որ ձեր ներողութիւնը խնդրեմ այս սոցերս՝ առանց վախերով նախարարին մը՝ ձեզ ուղղել համարձակելու համար: Պարագաներ կան որք կ'ստիպեն մարդս արտօրաւ այնպիսի ձեռնարկութեանց մէջ, որոց յաջողութիւնն համարութեամբ ու կամայ գործելով կրնայ միայն իրականութիւն գտնել: Նոյն օրինակ պարագայի մը մէջ կը գրեալ նուրբ այժմ: Մայրս հիւանդ է, հեռագրով Պաքու կանչուած եմ. ամսուայ 27 կէսօրին կը մեկնի շոգենաւ: Ժամանակին սուղ ըլլալը կը ստիպէ զիս ըսել ձեզ պարզապէս՝ ինչ որ պարտէի առայժմ իմ ընթացիւք միայն արտայայտել: Կը սիրեմ զձեզ, և տարակոյս չունիմ թէ Ձեր սուր աչքերը տեսած են արդէն այս արտայայտութիւնն իմ դէմքի և աչաց մէջ. Բայց որովհետև զեռ գուր ոչինչ պատասխանեցիք ինձ ձեր սրտի լեզուով, ստիպուած եմ խնդրել թէ արդեօք կրնամ յուսալ սպազային զձեզ իմ բողբոջակիցս անուանել:

Բնաւ չի պիտի փորձեմ գովեստներ կարգաւ իմ անձի վրայ ու մեծամեծ խոտուածներ ընել. երկար ատեն ի վեր զիս մտէն դիմաւորով տարակոյս չունիմ թէ զիս ճանչցաք այնչափ որչափ պէտք է այսպիսի հարց մը լուծելու համար: Վստահ եղիք սակայն, Օրիորդ, թէ ընդունելով իմ անունս և անկեղծ սիրտս, որ նուէր կը ըլլեմ Ձեզ, ոչ միայն երջանիկ պիտի ընէք մէկը, որ սրտի խորքին կը սիրէ զձեզ կաթոլիկն, այլ և երջանիկ պիտի կրնաք ըլլալ այնչափ որչափ երջանկութիւն կարելի է տրուել այս երկրագնդի վրայ՝ մահկանացուի մը համար. բայց ես ձեզ հետ անմահ պիտի ըլլամ:

Արդ թէք տրամադիր էք վառած սիրտ մը մտիկ չի դարձնել, կը խնդրեմ ձեր պաշտօնին անունով, առանց զիս մեղադրելու իմ այս յախուռն ընթացից համար՝ հրաման տաք ինձ որ մեկնելէ առաջ զամ տեսնել զձեզ, պայմանաւ որ այդ տեսնութիւնն առաջին քայլը ըլլայ այն երջանիկ կեանքին, որոյ հատկիւր երիտասարդութեան երազն ու փոփաքը եղած է միշտ:

Մնամ անհամբեր ձեր պատասխանին սպասող ՆԱՉԱՐ Նազար անգամ մը կարգաց նամակը ուղեց նախ քանի մը փոփոխութիւններ ընել, բայց ի վերջոյ ծալեց պահարանի մը մէջ գրաւ գայն

ու ծառան կանչելով անոր սուռա:

—Գէորգ, այս նամակը իրեն տրոջ կրնամ հասցունել:

—Այո, կրնամ, եթէ ստիպողական է:

—Տարակոյս չի կայ. եթէ ոչ՝ փոփոխով կը զրկէի:

Մասն նամակն առնելով դուրս ելաւ՝ առանց ուրիշ բան մը ըսելու: Պահ մը վերջ Ոսկի ստացած էր գայն: Նազար չի կրցաւ քննալ այդ գրիչը: Բանիցս անկողին մտաւ, աչքերը գոցեց ու ամեն ջանք ըրաւ զընտանալու համար, բայց իր ուրիշ գրիչը փորձերն բաւական չէին զընտանալու համար: Երբ միաքը անհանգիստ է, քունը կը մերժէ մտնելու:

Հետեւեալ օր Նազար ի գուր սեղը պատասխանի սպասեց: Թէև յուսահատած էր, բայց ինքզինքը խաբել կը ջանար. թերևս այս գրիչը պիտի պատասխանէ կ'ըսէր ինքզինին: Հետեւալ աւուր տաւառտեան թըղթարեր նորէն յուսախաբ ըրաւ վինք: Այժմ ժամ մնացեր էր մեկնելու, բայց Նազար որչա՞ռ էր մինչև վերջին րոպէն պատասխանի սպասել:

Մեկնելու րոպէն եկած էր. Նազար իր վերջի հրածեղի բարեւր աջով տանտիկնոջ ու բարեկամաց, երբ պայուսակն առաւ մեկնելու՝ աչքերը արտասուքով լեցուցանաւ:

Բարեկամք կը գործնային Նազարի արտասուքով վերաւ, և կը կարծէին թէ դիւրազգի էր Նազարը՝ իր բարեկամներէն բաժնուելուն համար... (Շարունակելի)

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Մ. Գ. Մ. Հըտուրն—Ձեր ձեռամբ Հըտուրնէն մեզ շնորհած \$ 14.25ը ժամանակին յանձնուած է ընդհանուր Գանձապահին: ՏԻԳՐԻՍԻ 55րդ թիւն մէջ փոխանակ Հըտուրնէն ըսուելու՝ Հէվրիէն ըսուած է սխալմամբ այս գրամին համար: Դիտել տարու ենք նաև թէ Հէվրիէն զըրկուած գումարը \$ 50.50 է, և շըրկուած է ուղղակի գանձապահին: Այս մասին ևս տեսնել ՏԻԳՐԻՍԻՆՈՅ թիւը Ս. Դ. Դ.—Ձեր ուղած շուքինք: Նոր հասցէնիդ 11736° է:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Մ. Գ. Մ. Հըտուրն—Ձեր ձեռամբ Հըտուրնէն մեզ շնորհած \$ 14.25ը ժամանակին յանձնուած է ընդհանուր Գանձապահին: ՏԻԳՐԻՍԻ 55րդ թիւն մէջ փոխանակ Հըտուրնէն ըսուելու՝ Հէվրիէն ըսուած է սխալմամբ այս գրամին համար: Դիտել տարու ենք նաև թէ Հէվրիէն զըրկուած գումարը \$ 50.50 է, և շըրկուած է ուղղակի գանձապահին: Այս մասին ևս տեսնել ՏԻԳՐԻՍԻՆՈՅ թիւը Ս. Դ. Դ.—Ձեր ուղած շուքինք: Նոր հասցէնիդ 11736° է:

AMIN MERHIGE & Co.

29 BROADWAY, NEW YORK, Room 212 ՄԵՍԱՔԱՆԱԿ (Հօսէյլ) ՎԱՃԱՌԱԿԱՆԻՔ

Արևելեան և Տաճկական Ապրանք

Այս վաճառատունն իր տեսակին մէջ ամենամեծն է ինչի ետք: Հոն կը վաճառուին ամեն տեսակ ասեղանագործներ, սեղանի, մէջքերի, փեմանոյի ևն. մետաքսեայ և ոսկեթել ծածկողներ, Դամասկոսի վարագոյրներ, Բերիսի աղապանի, քեֆիա, ևն. ևն.:

Հայ վաճառականք կը հրաւիրուին փորձել միանգամ: Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք փութով և խնամօք կը կատարուին: Գրեթէ չի չափաւոր և ապրանքներն լաւագոյն կ'ընտրուի ուրիշ ո'ւ է տունն չէ կարող մրցել այս տան հետ:

ԻնՉՈՒՂԻ ՉԻ ՆԱՍԽԱՆՉԻՆԻՔ

Ես կը փոփաքէի Ամերիկայի մէջ յուսալ տանիմ մեծաքսի գործը հայերուս համար, որպէս զի մի քիչ գործաւորութեան բեռը վերցնել յաջողինք:

Սակայն ցաւ իսիրտ կ'ըսեմ որ, մեր հայոց մեծամասնութիւնը կը խորհի թէ այդպիսի ձեռնարկ մը անյուսալի և անյաջողելի է, վասն զի պատճառ ունին այդպէս ըսելու: Կրնամ ըսել թէ Հայ ազգը ըլլալէ մինչև հիմայ չէ ունեցէր այնչափ գործարաններ՝ որչափ որ ունի վաճառականութիւն և վաշխառութիւն: Ինչո՞ւ չի նախանձինք Եւրոպական ազգերուն, որք մ'ըսա աշխատած են գիտութեամբ արուեստը յուսալ տանել և մեծնալ: Կ. Գ. ՉԱՊՐԻԳԵԱՆ

ՊՈՒՂՂՈՒՐ--ՊՈՒՂՂՈՒՐ--ՊՈՒՂՂՈՒՐ

ՊԱՏԱՍՈՐ ԹԱՇՅԱՆ ԵՒ ԸՆԿ.

B. TASHJIAN & Co.,

53 MAIN ST., BANGS COURT, WORCESTER, MASS.

Կը ծանուցանեն արգոյ հասարակութեան թէ իրենց փայտի գործը յաջողցնելէ վերջ հաստատած են այժմ պուլտուրի և ծեծածի գործարան մը վերայնեալ անուան աակ: Այս գործարանի մէջ պատրաստուած ապրանքներն ոչ միայն գիւրամատչելի գններով կը վաճառուին, այլ և մաքուր մաս ընտրի են ուրիշներէ:

Սնունդ վաճառելու համար խոշոր կամ մանր պուլտուրի փոռուներ համար 3½ սէնթ: Տուններու և ճաշարաններու համար դիւրութիւն տարու նպատակաւ որոշուած է մինչև 25 փոռու նպատակութեամբ ապրանք վաճառել: Ուրիշ քաղաքներէ յանձնարարութիւնք փութով և ճշդիւ կը կատարուին:

Փորձեցէք անգամ մը և գոհ պիտի մնաք:

ՆԵՐՍԷՍ Մ. ԹՈՎՄԱՍԵԱՆ ԵՒ ՄԱՐԿԵՐ Մ. ԹՈՒՆՄԱՆԵԱՆ

20½ Հըտուրն Փողոց, Պոսթըն, Մասս.

Միակ Հոյ նպարավաճառ ի Պոսթըն ի գիտութիւն Պոսթընի և շրջակայի հայերուն կը յայտարարենք թէ նպարեղցններու նոր խանութ մը բացած ենք, ուր կը գտնուի ամեն տեսակ ընտիր նպարեղցններ. օրինակ. պուլտուր, ծեծած, տպ, սիւսեռ, պամեայ, արեւելեան ձեռք աղցուած սուրճ (խահուէ), Սոյսերի պատրմայ, եսփրախ և այլն և այլն:

Ուրիշ քաղաքներէ յանձնարարութիւնք փութով և ճշդիւ կը կատարուին՝ գոհացուցիչ գններով:

Փորձեցէք անգամ մը և գոհ պիտի մնաք:

Կը ծանուցանեն արգոյ հասարակութեան թէ իրենց փայտի գործը յաջողցնելէ վերջ հաստատած են այժմ պուլտուրի և ծեծածի գործարան մը վերայնեալ անուան աակ: Այս գործարանի մէջ պատրաստուած ապրանքներն ոչ միայն գիւրամատչելի գններով կը վաճառուին, այլ և մաքուր մաս ընտրի են ուրիշներէ:



ԳՐԻԳՈՐ ՊՅՅԱՅԵԱՆ

Կողիավաճառ և Կողիակար

Թիւ 248 Էտի Ըսթրիտ, Փրօվիտէն.

Սնունդ ի մէջ կը վաճառուին ամեն տեսակ նոր և հին կոշիկներ՝ ամեն գրիներով: Կը նորագէտ հին կոշիկներ շափաւոր գրիներով: Արանց հին կոշիկներ, ձեռքով կարուածի համար, \$ 1.25, իսկ հասարակ կերպով նորագուծի ընդհանուր հին կոշիկներու գրիներն 50—85 սէնթ են:


Վստահաբար կրնամ ըսել թէ մեզ յաճախող հայրենակիցք մ'ըստ գոհ պիտի մնան՝ մեր արդէն ունեցած յաճախորդք նման:

ՀԱՅ ՅԱՃԱՍՈՐԻՆԵՐՈՒՍ

Պատիւ ունիմ ըսել թէ ասկէ վերջ «Աւրազգէր հէր վիկըր» անուն հրատարակ մազի գեղը պիտի ծախենք շէրք 50 սէնթ: Հմուտ բժիշկներ կը վկայեն թէ իր տեսակին մէջ լաւագոյն է մազերը զօրացնելու, բուժելու և նախանկան գոյրը պահպանելու համար:

Տակաւ մը զուտ նորվեկեան ձուկի իւղ բերել տուած եմ, որոյ լիպրան 45 սէնթի պիտի ծախենք: Գեղազրիներն կը պատրաստուին ամեն և թարմ դեղերէ: Փորձեցէք: ՈՒՒՆՏՍԸՐ ՏՐԸԿ ԼՍԹՕՐ,

Մաքը Հանսպլրկ 472 Յրդ ալիւ, Նիւ Եորք:



Ա. ԹՕՓՈՒՂԵԱՆ.

ԿՕՇԿԱՎԱՃԱՌ ԵՒ ԿՕՇԿԱԿԱՐ,

Թիւ 239 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք

Այս խանութին մէջ կը վաճառուին ամեն տեսակ կոշիկներ խիստ աժան գններով: Մեր հայրենակիցներէ փորձ մը միայն կը խնդրենք. Նոր ապարուած կոշիկներ կը կարենք ձեռաւոր և վայելուչ կերպով: Կը նորագէտ հին կոշիկներ շափաւոր գններով: Ուրիշ մը երթալէ յառաջ ինձ եկէք անգամ մը. եւ վստահ եղիք որ շատ գոհ պիտի մնաք: 239 Իսթ 26րդ փողոց

Արանց կոշիկներ \$1.25է մինչև \$5.00
Կանանց « \$1.25 « \$2.50
Տղայոց և աղջկանց կոշիկներ \$0.50 « \$1.50

Հ Ի Ր Չ Օ Լ Ա

ՄԱՉԻ ԴԵՂ

Հ Ի Ր Չ Օ Լ Ա

ՄԱՉԻ ԴԵՂ

Հ Ի Ր Չ Օ Լ Ա

ՄԱՉԻ ԴԵՂ

Հ Ի Ր Չ Օ Լ Ա

ՄԱՉԻ ԴԵՂ

Հ Ի Ր Չ Օ Լ Ա

ՄԱՉԻ ԴԵՂ

Հ Ի Ր Չ Օ Լ Ա

ՄԱՉԻ ԴԵՂ

Հ Ի Ր Չ Օ Լ Ա

ՄԱՉԻ ԴԵՂ

Հ Ի Ր Չ Օ Լ Ա

ՄԱՉԻ ԴԵՂ

Հ Ի Ր Չ Օ Լ Ա

ՄԱՉԻ ԴԵՂ

Հ Ի Ր Չ Օ Լ Ա

ՄԱՉԻ ԴԵՂ

Հ Ի Ր Չ Օ Լ Ա

ՄԱՉԻ ԴԵՂ

Հ Ի Ր Չ Օ Լ Ա

ՄԱՉԻ ԴԵՂ

Հ Ի Ր Չ Օ Լ Ա

ՄԱՉԻ ԴԵՂ

Հ Ի Ր Չ Օ Լ Ա

ՄԱՉԻ ԴԵՂ

Հ Ի Ր Չ Օ Լ Ա

ՄԱՉԻ ԴԵՂ

Հ Ի Ր Չ Օ Լ Ա

ՄԱՉԻ ԴԵՂ

Հ Ի Ր Չ Օ Լ Ա

ՄԱՉԻ ԴԵՂ

Հ Ի Ր Չ Օ Լ Ա

ՄԱՉԻ ԴԵՂ

Հ Ի Ր Չ Օ Լ Ա